ՋՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ
«ՀԱՅՋՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ» ՓԲԸ

Ներդրումային ծրագրերի համակարգման տնօրինություն

ՄՐՑՈՒՅԹԻ ՀՐԱՎԵՐ

Ամսաթիվ՝	13 Ապրիլի 2015թ.
Վարկ No՝	*L2860-ARM , Ջրամատակարարման և ջրահեռացման սեկտորի ծրագիր – Լրացուցիչ ֆինանսավորում*
Պայմանագիր No՝	*L2860-ICB-1-03/3, Ջրամատակարարման համակարգերի բարելավում Չարենցավան, Աբովյան քաղաքներում և Սոլակ գյուղում*
Հայտերի ներկայացման վերջնաժամկետ՝	25 Մայիսի, 2015թ, 15:00 /տեղական ժամանակով/

1. *Հայաստանի Հանրապետությունը* ֆինանսավորում է ստացել Ասիական Զարգացման Բանկից (ԱԶԲ)՝ *2860-ARM Ջրամատակարարման և ջրահեռացման սեկտորի ծրագրի – Լրացուցիչ ֆինանսավորման* ծրագիրն իրականացնելու նպատակով: Վարկի միջոցների մի մասը նախատեսվում է օգտագործել վերոնշյալ պայմանագիրն իրականացնելու համար: Պայմանագիրը համաֆինանսավորվելու է ՀՀ կառավարության կողմից: Մրցույթը բաց է ԱԶԲ-ի կողմից իրավասու ճանաչված բոլոր երկրների հայտատուների համար:

2. **«Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ (Պատվիրատու)** իրավասու հայտատուներին հրավիրում է ներկայացնել կնքված հայտեր *Պայմանագիր No՝ L2860-ICB-1-03/3,«Ջրամատակարարման համակարգերի բարելավում Չարենցավան, Աբովյան քաղաքներում և Սոլակ գյուղում» իրականացնելու համար:*

Աշխատանքները բաղկացած են հետևյալից.

<u>ք.Չարենցավան</u>

Բաշխիչ ցանց

- 19.2կմ ընդհանուր երկարությամբ de315-de40 պոլիէթիլենե ներթաղամասային ջրագծերի կառուցում,
- 0.2կմ ընդհանուր երկարությամբ de32-de20 տրամագծի պոլիէթիլենե մուտքագծերի կառուցում անհատական տների համար,
- 13 հատ ջրաչափական հորերի տեղադրում:

<u>ք.Աբովյան (Կենտրոն քաղ.)</u>

Բաշխիչ ցանց

- 4.0կմ ընդհանուր երկարությամբ de225-de63 պոլիէթիլենե ներթաղամասային ջրագծերի կառուցում,

- 0.4կմ ընդհանուր երկարությամբ de32-de20 տրամագծի պոլիէթիլենե մուտքագծերի կառուցում անհատական տների համար,
- 30 հատ ջրաչափական հորերի տեղադրում:

<u>գ.Սոլակ</u>

Արտաքին համակարգ

- 1.3կմ երկարությամբ de160 տրամագծի պոլիէթիլենե ջրատարի կառուցում,
- 40մ^3 տարողությամբ ջրընդունիչ ավազանի կառուցում:

Բաշխիչ ցանց

- 6.4կմ երկարությամբ de160-de40 տրամագծի պոլիէթիլենե ներթաղամասային ջրագծերի կառուցում,
- 1.6կմ ընհանուր երկարությամբ de20-de32 տրամագծի պոլիէթիլենե մուտքագծերի կառուցում անհատական տների համար,
- 180 հատ ջրաչափական հորերի տեղադրում:

3. Միջազգային մրցույթը կիրականացվի ԱԶԲ-ի **<u>«Մեկ փուլ - մեկ ծրար»</u>** մրցութային ընթացակարգի համաձայն և բաց է ԱԶԲ իրավասու անդամ երկրների բոլոր հայտատուների համար:

4. Մրցույթին կարող են մասնակցել միայն հետևյալ որակավորում ունեցող իրավասու հայտատուները.

-Շինարարության միջին շրջանառությունը պետք է կազմի նվազագույնը 3,100,000 (երեք միլիոն հարյուր հազար) ԱՄՆ դոլար, որը հաշվարկվել է որպես վերջին 3 (երեք) տարիների ընթացքում ավարտված կամ ընթացքի մեջ գտնվող պայմանագրերից ստացված ընդհանուր վճարումներ:

- Ֆինանսական միջոցների մատչելիություն կամ առկայություն, ինչպիսիք են իրացվելի ակտիվները, այլ պարտավորություններով չծանրաբեռնված նյութական ակտիվները, վարկային գծերը և այլ ֆինանսական միջոցներ, բացի որևէ պայմանագրային կանխավճարներից՝ 440,000 (չորս հարյուր քառասուն հազար) ԱՄՆ դոլար գումարով:

- Վերջին 3 (երեք) տարիների ընթացքում որպես կապալառու, հիմնական կապալառու կամ ենթակապալառու ունենա առնվազն 1 (մեկ) պայմանագրի մասնակցություն՝ առնվազն 1.320.000 (մեկ միլիոն երեք հարյուր քսան հազար) ԱՄՆ դոլար արժեքով՝ հաջողությամբ կամ հիմնականում ավարտված: Կատարված աշխատանքների փորձը պետք է նման լինի 10կմ ՊԷ խողովակաշարի կառուցման աշխատանքներին:

-Բոլոր դատական գործընթացները պետք է դիտվեն որպես լուծված ընդդեմ հայտատուի, ինչն ընդհանուր առմամբ չպետք է կազմի հայտատուի զուտ կապիտալի 50 տոկոսից ավելին:

Մրցույթի մասնակիցները պետք է ունենան հիդրոտեխնիկական կառույցների կառուցման վավեր լիցենզիա/թույլտվություն՝ տրված ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից: Նման լիցենզիայի/թույլտվության բացակայության դեպքում մրցույթի մասնակիցները պետք է հայտի հետ միասին ներկայացնեն ստորագրված փաստաթուղթ այն մասին, որ պայմանագրի շնորհման դեպքում մրցույթի մասնակիցը կներկայացնի ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից տրված համապատասխան լիցենզիա:

5. Լրացուցիչ տեղեկատվություն ստանալու և մրցութային փաստաթղթերը ստուգելու նպատակով հայտատուները պետք է դիմեն հետևյալ հասցեով.

«Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ (ՀՋԿ ՓԲԸ),
Ներդրումային Ծրագրերի Համակարգման Տնօրինություն (ՆԾՀՏ)
Պրն Նորիկ Գևորգյանին, ՀՋԿ ՓԲԸ ՆԾՀՏ-ի տնօրեն
Էդուարդ Չիլ-Հակոբյանին, ՀՋԿ ՓԲԸ ՆԾՀՏ-ի Ծրագրի կառավարիչ
Քրիստինե Ղամբարյանին՝ Գնումների մասնագետ
Հասցեն՝ Վարդանանց փակուղի 8ա, 3-րդ հարկ, ք.Երևան, 0010, ՀՀ
Հեռ./ ֆաքս՝ (374 10) 54 28 77
էլ. փոստ՝ ngevorgyan@armwater.am, echilakopyan@armwater.am,
kghambaryan@armwater.am

6. Անգլերեն լեզվով մրցութային փաստաթղթերը ձեռք բերելու համար շահագրգիռ հայտատուները պետք է.

- ուղարկեն գրավոր նամակ *Պայմանագիր No՝ L2860-ICB-1-03/3* ***«Ջրամատակարարման համակարգերի բարելավում Չարենցավան, Աբովյան քաղաքներում և Սոլակ գյուղում»*** *պայմանագրի մրցութային փաստաթղթերը ձեռք բերելու համար,*

- վճարեն **100 ԱՄՆ դոլար կամ 40 000 ՀՀ դրամ** չփոխհատուցվող գումար: Վճարման ձևը պետք է լինի գումարի անմիջական վճարում «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի դրամարկղ կամ ուղղակի դեպոզիտ «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի ներքոնշյալ հաշվեհամարին.

  ԱՄՆ դոլար՝ ՎՏԲ բանկ Հայաստան, h/h 160483054419, SWIFT կոդ՝ ARMJAM22, Նալբանդյան փ.46, 0010, Երևան, Հայաստան, կամ

  ՀՀ դրամ՝ Արդշինինվեստ բանկ, h/h 247010078175, SWIFT կոդ՝ ASHBAM22, Գրիգոր Լուսավորիչ փ.13, 0010, Երևան, Հայաստան:

6. Հայտերը պետք է ներկայացվեն՝

- վերոնշյալ հասցեով,
- վերջնաժամկետի օրը կամ դրանից առաջ՝ **25 Մայիսի 2015թ, 15:00 /տեղական ժամանակով/,**
- մրցութային փաստաթղթերեթում սահմանված հայտի երաշխիքի հետ միասին:

Հայտերը կբացվեն վերջնաժամկետից անմիջապես հետո՝ մասնակցելու ցանկություն հայտնած հայտատուների ներկայացուցիչների ներկայությամբ: